

հրամայէ՝ որ «զերկու յիսնական արբապան արասցէ», որոյ սահմանը տեսանք (աստ, 404), եւ «որպէս գառազ պանսե ծոմով պահեսցէ» (Խրտ. ԺԸ): Եթէ ի պատիժ էր պահեսցողութեան այս ձեւն յիսնակաց մէջ, ուրեմն սովորական չէր:

Գ. Նման մեծ պահոց, այս երկու քառասնորդաց շարաթուց եւ կիրակէից լուծումն ալ կար ու խնդրոյ նիւթ էր՝ նոյն իսկ Խոսրովկայ ժամանակէն: Ասոր վերոյիշեալ (425) վկայութեան մէջ տեսանք՝ թէ ինչպէս ոմանք կը պահէին զանոնք եւ ոմանք ոչ: Իւրմէ եօթ դար վերջ Սիմ. Այրիվանեցին դեռ նոյնպէս կը գտնէր, ու միայնակեցաց եւ ապաշխարողաց կը հրամայէր՝ որ «զերեք յիսնակսն կենայ պահօք շարաք եւ կիրակիս» (Հյպտ. 570). ուրեմն աշխարհականք փափուկ կ'անցնէին:

Գ. Միջին դարուն փոփոխութիւն մը կը մտնէ երկու քառասնորդաց պահեսցողութեան մէջ. ԺԱ. դարու սկիզբը Տարօնացին քառասունքը մէկ եօթնեկի վերածուած կը գտնէ, ըսելով՝ թէ Աստուածայայտնութեան տօնէն յառաջ «շարաքօրեայ մարութեամբ եւ պահօք պարկեշտանամբ» (Թէոփ. 231): ԺԳ. դարուն վիլլերրանդ կը տեսնէ կիրիկիոյ մէջ նոյն պահքն աւելի երկար, «տասներկու օր» (Յուշ. Ա,